

Հոդվածների ձևավորման կանոնները

1. Հոդվածը կարող է ներկայացվել երեք լեզուներից որևէ մեկով՝ անգլերեն, ռուսերեն, հայերեն: Խմբագրությունը պետք է ներկայացված լինի էլեկտրոնային տարբերակով USB կրիչով Ուռուցքաբանության Ազգային Կենտրոն, կամ info@oncology.am էլեկտրոնային հասցեին:
2. Հոդվածների բնօրինակները պետք է կառուցված լինեն ըստ համաշխարհային գիտական պարբերականների ձևաչափի. կազմությունը ըստ բաժինների – **ներածություն, հետազոտության նպատակը, նյութերն ու մեթոդները, արդյունքներն ու քննարկումները, եզրափակում կոնկրետ եզրակացություններով**, որոնցում հակիրճ ներկայացվում են աշխատանքի արդյունքներն ու հեղինակների առաջարկությունները՝ վերևում նշված նյութերի համաձայն: Անհրաժեշտ է նշել **շահերի բախման** մասին ինֆորմացիան:
3. **Հոդվածի անվանումը:**
4. **Հոդվածի հեղինակները:** Հոդվածի հեղինակների անունները գրելիս պետք է ի սկզբանե նշվի ազգանունը, անունը, հայրանունը: Տրամադրեք անվճար տեղեկատվություն հեղինակի և ընթերցողի հաղորդակցման նպատակով (էլեկտրոնային փոստ/e-mail):
5. **Հաստատության անվանումը:** Անհրաժեշտ է ներկայացնել հաստատության պաշտոնական ամբողջական անվանումները առանց հապավումների:
6. **Բանալի բառերը** (առնվազն 7) ներկայացնել հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով:
7. **Գործելակարգ:** Գործելակարգի կառուցվածքը. ոչ պակաս քան 250 բառ (յուրաքանչյուր գործելակարգ ներկայացված է երեք լեզուներով՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն), որը բաղկացած է հետևյալ մասերից. ներածություն, հետազոտության նպատակ, նյութեր և մեթոդներ, արդյունքներ, քննարկումներ և եզրակացություններ:
8. **Հոդվածի տեքստը** ընդունվում է Word Document ձևաչափով՝ 1.5 ինտերվալով 12 միավորով, Times New Roman տառատեսակով եւ Times LatArm՝ հայերեն տեքստի համար, եզրերից 2.0 սմ, տողադարձ չի կատարվում:

9. Ձեռագրի ամբողջական **տեքստի ծավալը** (հետազոտություններ, դասախոսություններ, ակնարկներ), ներառյալ աղյուսակները եւ հղումները, չպետք է գերազանցեն 6000 բառ: Կլինիկական դեպքերի նկարագրությանը նվիրված հոդվածների ծավալը ոչ ավելի քան 4000 բառ: Հոդվածի ծավալը, ներառյալ աղյուսակները եւ գրականությունը, պետք է լինեն մինչեւ 20,000 նիշ (A4 ֆորմատով մինչեւ 10 էջ): Բոլոր էջերը պետք է համարակալված լինեն:
10. Հոդվածի անվանումը պետք չէ կրճատել: Լրիվ տերմինը, որի փոխարեն ներկայացվում է հապավումը, պետք է վերծանվի տեքստի առաջին նշումով (ստանդարտ չափման միավորները և սիմվոլները չպետք է վերծանվեն): Օգտագործեք միայն համատարած ընդունված կրճատումները (**հապավումներ**):
11. **Աղյուսակները** պետք է ունենան անուն, լինեն հակիրճ, հստակ, վերնագրերը պետք է համապատասխանեն բովանդակությանը, ունենան հղումներ տեքստում: Աղյուսակների բոլոր թվերը պետք է համապատասխանեն տեքստում առկա թվերին:
12. Բժշկության մեջ օգտագործվող **չափման միավորները`** ֆիզիկական, հեմատոլոգիական և այլ ցուցանիշների, պետք է ներկայացվեն ըստ միավորների համակարգի (Միավորների միջազգային համակարգ` SI):
13. Գծագրերի, գրաֆիկների, նկարագրություններով լուսանկարների ֆայլերը պետք է ներկայացվեն **հոդվածից առանձին**: Ամսագրում տեղադրման համար ընդունելի են հետևյալ ձևաչափերը` TIFF, JPEG, առնվազն 8-ի սեղման գործակցով, առնվազն 6 x 9 չափի, 300 dpi թույլատրությամբ:
14. **Գրականության ցանկը** պետք է տրվի հոդվածի վերջում: Հղումների թվերը նույն տեքստում պետք է ներկայացված լինեն “քառակուսի” փակագծերում: Գրականության ցանկի ճշգրտության համար պատասխանատու է հեղինակը: Գրականության ընդհանուր ծավալը չպետք է գերազանցի ավելի քան 30 աղբյուրը:
15. Խմբագրական խորհրդին ներկայացված բոլոր հոդվածները վերանայվում են, վերանայողների մեկնաբանությունները ուղարկվում են հեղինակին` առանց վերանայողների անունների: Հեղինակի կարծիքներն ու պատասխանները ստանալուց հետո խմբագրական խորհուրդը որոշում է հոդվածի հրատարակումը (կամ մերժումը):

16. Ամսագրի խմբագրությունն իրավունք ունի առանց հեղինակի հետ համաձայնեցնելու կատարել փոքր կրճատումներ, փոփոխություններ ընդհանուր տեսքտում, հոդվածի ձևում, կատարել անվանական կամ ձևաչափի բնույթի փոքր ուղղումներ: Եթե հոդվածը մշակվել է հեղինակի կողմից հրապարակման պատրաստման գործընթացում, ստացման ամսաթիվն է համարվում վերջնական տեքստը ստանալու օրը: